21.09.2024թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս մեր պետականության խորհրդանիշ Անկախության տոնի առթիվ:

Անկախության գաղափարի կյանքի կոչման սկիզբը 1991 թվականն էր, որը պիտի շարունակվեր ու շարունակվում է աշխարհում մեր տեղն ունենալու ամենօրյա աշխատանքով ու պայքարով:

Անկախությանն «Այո» ասելով՝ հայ ժողովուրդը վերահաստատեց ազատ ապրելու իր դարավոր ու նվիրական երազանքը:

Անկախության 33-ամյա ճանապարհն ամբողջանում է Հայոց բանակի ստեղծմամբ և կայացմամբ, պետականության կերտմամբ, հայորդիների հերոսացմամբ ու ամենօրյա ստեղծագործ աշխատանքով, մեր երկրի զարգացմանն ու առաջընթացին նպաստող քայլերով, մեզ բաժին հասած փորձություններով ու մարտահրավերներով:

Անկախությունը դարձավ մեր՝ երազանքներից դեպի նպատակ տանող ճանապարհի ուղեկիցը: Արցախյան հերոսամարտերն էլ մեր գոյաբանական պայքարի, մեր լինելիության փորձաքարերն էին: Անկախության ու պայքարի զոհասեղանին հայ ժողովրդի նվիրյալ զավակները դրեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը:

2020-ի 44-օրյա պատերազմի ընթացքում, և դրանից հետո էլ անկախության սերնդի մեր նվիրյալ զավակներն իրենց պապերի ու հայրերի սխրանքը կրկնեցին, կենաց ու մահու կռիվ տվեցին՝ դառնալով մերօրյա հերոսներ: Ավաղ, մեր լավագույն տղաները բռնեցին հավերժի ճանապարհը՝ ապրողներիս տալով հայրենապաշտության դասեր ու պատգամելով՝ ունենալ ուժեղ ու հզոր հայրենիք:

Փառք մեր հերոսներին, մեր խոնարհումը նրանց հիշատակի առջև:

Պետական համակարգի կայացումից մինչև տնտեսական բարեփոխումներ, կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերից մինչև հոգևոր-մշակութային կյանքի զարթոնք, դիվանագիտական հարաբերություններից մինչև ազգային արժեքների վերագնահատում. սրանք անկախության ճանապարհի գումարելիներն են, որոնք պահանջում են մշտական աշխատանք ու անմնացորդ նվիրում, որոնք հաճախ տրվում են մեծ դժվարությամբ:

Վերջին տարիներին մեր ժողովուրդը կրկին անցնում է փորձությունների ու պայքարի ճանապարհով, պայքարում իր ինքնիշխան տարածքների և պետականության համար: Արտաքին ու ներքին մարտահրավերներին հակակշիռ՝ մենք ունենք հայրենիքը պահելու, այն շենացնելու ու հզորացնելու համազգային ծրագիր, որը պահանջում է միասնականություն, նվիրյալ աշխատանք և համախմբում:

Հարգելի հայրենակիցներ, Սևան համայնքի բնակիչներ

Իմ, համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ նվիրական տոնի՝ Անկախության 33-րդ տարեդարձի առթիվ:

Մաղթում եմ բոլորիս խաղաղ և անվտանգ կյանք, մեր երկրի տերը լինելու, նրա այսօրն ու վաղը կերտելու, մեր հայրենիքը շենացնելու, նրա սահմաններն անառիկ պահելու կամք և

վճռականություն, համազգային նպատակների իրականացում, բարեկեցություն, անվտանգ ու ապահով ապագա:

Հավերժ փառք Անկախությունը նվաճած ու պահպանած մեր հերոսներին, մեր լուսավոր տղաներին, արժանի լինենք նրանց սուրբ գործին ու սխրանքներին:

Շնորհավոր Անկախության օր՝ մեր ինքնության, հավատի ու ապագայի ուղենիշ: